

ՄՇԱԿ

Տարեկան զինը 10 բարձր, կես տարվան 6 բարձր.
Առանձին համարները 7 կոպեկով:

Ռեֆրիտում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բայ է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խորաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ֆ օ ն № 253.

Հ Ի Ն Դ Ն Ա Ր Ք Ի Յ Ո Ւ Ն Ի Ս Ի Ա Ր Ք Ի Յ Ո Ւ Ն Ի Ս Ի

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Վէճ չէ կարող լինել.— Ներքին Տեսութիւն. Նա-
մակներ Մոսկովայից. Ներքին Տեսութիւն.— ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ռեդա-
կցիայի բաժանումը. Արդիւն. Ռեդակցիայի գրու-
թիւնը. Նամակ Անգլիայից. Արտաքին Տեսութիւն.
— ՀԵՌՈՎԱՐՔԻՆ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱ-
ՆԱՍԻՐԱՎԱՆ.— Բարձր:

ՎԷՃ ԶԷ ԿԱՐՈՂ ԼԻՆԵՆ

Այժմ քաղաքում պէտք է հիմնել պօլի-
տեխնիկական բարձրագոյն դպրոց
կազմակերպել համար, Ռեֆրիտում, թէ Վլադի-
կովիչը, — իհարկ է հարց, որ ներկա-
յում գրադեցիւմ է ոչ միայն այդ քա-
ղաքների վարչապետները, այլ և լուսա-
ւորութեան միջնակարգութեան ներկայացու-
ցիւններին: Ամբողջ Անդրկովկասի համար ոչ
մի վայրկեան կազմած չէ կարող ծագել,
որ այդ երկու քաղաքները պէտք է ան-
շուշտ գերազանց Ռեֆրիտը: Մեր երկրի
քաղաքային ինքնավարութիւնները և բնա-
կային հաստատութիւնները միաբերան և
համերաշխ կերպով յայտնեցին նոյն հա-
յեացքը, առանց տասանվելու:

Եւ դարձանալի պէտք է երկայ մեր ըն-
թերցողներին, եթէ ասեմք, որ չը նայելով
խնդրի չափազանց պարզութեան և ընդ-
հանուր կարծիքի անյայտ արմատաբու-
նեան, մի քանի շրջաններում ոչ միայն
լուրջ կերպով շարունակում են այդ վեճը
մանրամասն քննել, այլ և աշխատում են
լուրջ կերպով Վլադիկովիչի օգտին, իսկ
Անդրկովկասի կարծիքը համարում են բըղ-
լած նեղ, տեղական մասնաւոր շահերից:
Նոյն այդ տեսակ հայեացք է յայտնում և
Վլադիկովիչը հրատարակող «Էս-
տրա» լրագիրը, որը ոչ միայն յարգանքով
չէ վերաբերվում դեպի Անդրկովկասի քա-
ղաքների կարծիքները, այլ և անուանում
է նրանց արդիւնք եսականութեան:

Եթէ Վլադիկովիչը փոխարէն Ռեֆրի-
տի վերաբերմամբ համեմատութեան դըր-
ված լինէին բազու կամ բաժումը քաղաք-
ները, մենք կարելի կը համարէինք զանա-

զան առարկութիւններ, որովհետեւ այնտեղ
զատողութիւնները պէտք է հիմնված լի-
նէին երթագրութիւնների վրա, այդ քա-
ղաքների ապագայ բարգաւաճման յոյսեր
վրա: Բայց երբ Ռեֆրիտն է Վլադիկովիչի
զին հետ համեմատվում, միայն կատարեալ
թիւրխմանցութիւնը կարող է դերադասու-
թիւն տալ վերջին քաղաքին, որը չունի ոչ
մեծ մասուր կեանք, ոչ արդիւնաբերու-
թիւն և որը իր համար բարդ կը համա-
բերել նրա բազմազան և համեմատաբար
զարգացած կեանքը:

Եթէ կարող է լինել մասնաւոր շահերի
կամ եսականութեան մասին որ և է մե-
զազարմեք, այդ առելի յարմար կերպով կա-
րելի է վերադարձնել Վլադիկովիչին, քան
Անդրկովկասի միւս քաղաքներին, որոնք ի-
րանց համար չէին հոգում, ինչպէս Վլա-
դիկովիչը, այլ Ռեֆրիտի համար:

Տարիներ առաջ, երբ Գրիգոր Արծրունին
նոր էր սկսում իր դրական գործունէու-
թիւնը, նա պաշտպան էր Ռեֆրիտին մէջ
համայնքային հիմնուր առաջարկին: Բայց
անցաւ ժամանակ, հանգամանքները փո-
փոխեցին, Ռեֆրիտը և ամբողջ Անդրկովկասը
առաջ դնացին և Արծրունին հանդէս եկաւ
իր և կովկասի համայնքային ինքնուր ջերմ
պաշտպանութիւնը մէջ: Ուրեմն այստեղ է-
սականութեան խնդիր չէ, այլ խնայելու-
թեան պահանջի խնդիր: Եւ եթէ այսօր
պօլիտեխնիկական դպրոցի համար Ռեֆրիտը
համարվում է առելի յարմար, քան Վլա-
դիկովիչը, դա միայն արդար պահանջի
արտայայտութիւն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԿՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻՆ

I.

Յուլիտի 15-ին

Պատրաստութիւններ

Այս բուլետեն Մոսկովայի համարեա ամբողջ ըը-
ժկական դասակարգը, որի թիւը հազարների է
հասնում, մի անպատմելի իրարանցումի մէջ է:

Վերջին օրերի վերջերս խոսում են Չազա
կուրդ բարբառում: Այս բարբառը քերական
բարբառից առելի շատ է մօտ պարսից լեզուին,
բայց նրա մէջ առելի շատ է հայերէն բառերի
խառնուրդը: Կայ և մի երբայր բարբառ, Հուրա-
նի, որ զորք են անում Արքէլեանի և Քերման-
շահի վերջերս Գա նոյն քերմանջի լեզուն է,
բայց պարսիկէն բառերի խիստ մեծ խառնուրդ
ունի:

Քերմանջի լեզուի մէջ յաճախ պատահում է
երկար կրկնվող ու հնչուր, որ միանալով կոկոր-
դային սուր ձայների և թանձր բառի հետ, ա-
ռաջացնում է անսովոր կտրուկ և խիստ ազաւ-
րութիւն, մասնաւոր կերպ խոսակցիները զբոյր-
ված են մի ինչ որ պատճառով:

Պատմութիւն

Թէ քերմանջի յատուկ է ազատասիրութիւնը,
թէ և վերջի շատ է նրանց մէջ ազգային դրաց-
մունք կայ, որ թող է տուել նրանց պահպանելու
զուն և սովորութիւնները, բայց և այդպէս, քերմանջ
երբէք չեն կարողացել մի հաստատուն պետութիւն
ստեղծել և մինչեւ անգամ երբէք չեն ձգտել այդ
բանին: Քերմանջի հայրենասիրութիւնը իր ցեղի (ա-
շիրէթ) սահմանից չէ դուրս եկել և եթէ մի-մի
պատահել է որ մի քանի ցեղեր միացել են ընդ-
հանուր ոյժով գործելու համար, առաջին իսկ
անաջողութիւնները ցրվել են այդպիսի միւս-
թիւնը:

Հատուկապէս տեղեկութիւններ քերմանջի մա-
սին պատահում են ասորական յիշատակարան-
ներում, բայց առաջին հաւաստի տեղեկութիւն

Նա տեղապիս կռնողով պատրաստվում է մի
մեծ գործի, զիտութեան մի մեծապէս հանդէսի,
մի մեծախորհուրդ տօնի, որի աջող կազմակեր-
պութեան, գոնէ արտաքին վայրի պատասխա-
նատութեան ծանրութիւնն ամբողջապէս ընկ-
նում է իր վրա: Ինչ տեղ որ բնիկ պատահեա-
ծանօթիների տանը թէ հիւրանոցում, փողոցում
թէ նոյն իսկ հիւանդի անկողնի մօտ ամեն տեղ
էլ նրա դրոյցի, նրա խոսակցութեան միակ և
ամենահետաքրքիր նիւթը առաջիկայ Վիշազ-
գային բժշկական համաժողովն է, որ շատ չու-
տով պէտք է տեղի ունենայ Մոսկովայում—օգոս-
տոսի սկզբներին: Օր չէ անցնում, որ Մոսկովայի
բժիշկները ժողովներ ու նիստեր չունենան Ա-
մենքն էլ նշանաւոր թէ անհան, հաշակաւոր
թէ անհան, բնիկ թէ բժշկական հասարակու-
ստում, խոսում, խորհրդակցում են, անակոտե-
սակ մասնաժողովներ ու յանձնաժողովներ են
ընտրում, զանազան ծրագրեր են կազմում,
նորնոր խնդիրներ ու առարկութիւններ են ա-
նում—և այդ բոլորը նրա համար է, որպէս զի-
տասող կայանալը Վիշազգային բժշկական
համաժողովը, որքան կարելի է գեղեցիկ և օրի-
նակելի պայմաններ մէջ գրվի, և Մոսկովայի
բժշկական կազմը—պերսոնալը, որ այս դէպքում
մի տեսակ հիւրանոցային տանուտէր է հանդիսա-
նում, առաջ ասած՝ ЛИЦОМЪ ВЪ ПРАЗЕ НЕ УДАРИТЬ,
ամօթով չը մնայ այն բազմաթիւ, հազարաւոր օ-
տարազգի հիւրերի առաջ, որոնք իբրև համա-
ժողովի անդամներ՝ պէտք է լցնեն Մոսկովայի
Եւ իրաւ, հանար բան է, աշխարհիս ամեն ծայ-
րերից, ամեն երկրներից 7—8 հազարի չափ հիւ-
րեր ընդունել, և այն էլ ինչ հիւրեր—բոլորն էլ
գիտութեան ներկայացուցիչներ, որոնց մէջ աչքի
են ընկնում այնքան ակամաւոր մարդիկ, փայ-
լում են այնքան լուսաւոր անուններ Ամբողջ
քաղաքակրթ աշխարհի բժշկական արուեստի,
այդ լայնածաւալ գիտութեան համարեա բոլոր
նշանաւոր մշակները, իրանց զլուս ունենալով
մեծանուն վիրասոլիս, որի անունը ըստ յայտնի
է և կովկասեցիներէր, պէտք է ներկայ գտնվեն
այդ համաժողովին, և բոլորն էլ արդէն յայտ-
նել են իրանց պատրաստակաւութիւնը: Գէ, արի-

նրանց մասին տալիս է Քանիֆոն իր Անաբազի-
տի մէջ. Քանիֆոնի կարգուկները ապրում էին
Ցաւրոսի լեռներում և պարսից թագաւորներին
կիսանկախ հպատակներն էին: Նրանց կենցաղա-
վարութիւնը քիչ էր զանազանվում այժմեան
նրանց սերունդների կենցաղավարութիւնից. ա-
ռանձին նմանութիւն երևում է պատերազմական
ընդհարումների մէջ. նոյն յանդիւնութիւն և զի-
մացիանութեան նոյն պակասութիւնը: Մի գիծ
միայն զանազանում է այն ժամանակվայ քրդե-
րին այժմեաններից. այն ժամանակները նրանք
մեծ մասամբ հետեակ զինուորներ էին: Երբ
պատահական պատճառներ ունէր այդ հանգա-
մանքը, որովհետեւ երբ զար յետոյ քրդերը
պարթևական հեծնազօրքի մեծ մասն էին կազ-
մում: Ըստ երևոյթի, պարթևացի Արշակունիներ-
ու և յետոյ Սասանեան հարստութեան ժամանա-
կը Քերմանջի ամենամազկած ժամանակն էր: Խա-
լամի ժառանգը, պարսից պետութեան անկումը
(652 թ.) Քերմանջի համար ստեղծեցին կատա-
րեալ անիշխանական գրութիւն, որից նա չէր
դուրս եկել մինչև ամենավերջին ժամանակները:
Քերմանջի իշխանութիւնները ծագում են և ընկ-
նում պատահաբանների խաղով, քրդական գիւղերը
հարևան իշխանների ծառայութեան մէջ են մտ-
նում վարձով:

Այս վերջին հանդամների շնորհիւ հաջակվեց
մի մարդ, որ ահագին դեր է կատարել մահմե-
դական արևելքում. դա խաչակիրների արշա-
ւանդների պատմութեան մէջ յայտնի Սալադինն
է (Նազըր-Խուսեֆ-Սալա-էդդին): Նա ծնվել է 1137
թվին Թէքրիտի մօտ Բոլանդի (այժմեան Բէ-

ու. արժանապէս պատուով և չուրով ընդունիւր
բաղրին էլ: Պէտք է բոլորի համար պատրաստել
յարմարաւոր ընակարաններ, մասնաւորապէս որ հա-
մաժողովի անդամներից շատերը գալիս են ի-
րանց ընտանիքներով. պէտք է հոգ տանել նրանց
կեանքի, նիստ ու կացի յարմարութիւնների վը-
րա, պէտք է լիապէս բաւակաւութեան տալ
օտարազգի զինական հիւրերի բանասիրական
հետաքրքրութեան, դիւրացնել նրանց՝ ընդհան-
րապէս Ռուսաստանի հետաքրքրաշարժ քաղաք-
ների և մասնաւորապէս Մոսկովայի հետ ծանօ-
թանալու գործը. պէտք է թէ նրախանի և թէ
կեանքի դիւրութիւնների կողմից թեթիւ ու
ձեռնառու պայմաններ մէջ դնել այդ հիւրերի ճա-
նապարհորդութիւնը Ռուսաստանում որպէս ջրի,
նոյնպէս և ցամաքի վրա, պէտք է... Բազմաթիւ
են այդ պէտքերը—և անհայտ պէտքերի բաւարա-
րութիւն տալուն, այդ բազմազան քաղաքական
պատրաստութիւններին է նուիրված ներկայումս
Մոսկովայի բժշկական ամբողջ կազմը: Այդ բա-
նում նրան սիրով և ամենայն պատրաստակաւու-
թեամբ խոստացել են անակոտեւոր հասարակու-
սանի այն բոլոր քաղաքները՝ Պետերբուրգ, Օ-
դեսա, Կիեւ, Խարկով, Կազան և այլն, ուր հա-
նապարհորդելու ցանկութիւն կը յայտնեն հա-
մաժողովի անդամները: Այդ բոլոր քաղաքները
նոյնպէս պատրաստութիւններ են տեսնում ար-
ժանապէս ընդունելութիւն ցոյց տալու եկւոր
օտարազգի հիւրերին և ամեն տեսակ յարմարու-
թիւններով չըջողատելու նրանց:

Մոսկովայում վաղուց արդէն ընտրված է բը-
ժիշկների միջից Վիշազգային բժշկական համա-
ժողովը կազմակերպող մի կենսաբանական կոմի-
տեա, որը իր ձեռքի տակ ունի մի քանի օժան-
դակ յանձնաժողովներ: Այդ կենսաբանական կոմի-
տետի բանակցութեամբ հանապարհներ հարի-
րակցութեան միջնակարգութիւններ են տեսնում ար-
ժանապէս և կարողացել է, որ համաժողովի
անդամների ճանապարհորդութիւնը Ռուսաստա-
նում մի քանի տեղեր բոլորովին ձրի լինի, իսկ
մի քանի տեղեր՝ նշանաւոր զիջումով: Կոմիտե-
տի կարգադրութեամբ տեղային բժիշկները եկ-
ւոր օտարազգի հիւրերին խումբ-խումբ բաժա-

վանդուղ աշիրթի) շէյխական տոհմում: Այստեղ
Սալադինի հանրամատնութիւնը զննու-
հարկ չը կայ, բայց չէ կարելի ուշադրութիւն չը
դարձնել այն հանգամանքի վրա, որ ահագին ոյժի
տէր դառնալով, նա մինչև անգամ փորձ չէ անում
Քերմանջի ամեն կազմակերպութիւն ստեղծելու
համար: Այս գծի մէջ երկաց նրա բնիկ քրդա-
կան արևելքը:

Մոնղոլների արշաւանքը և ամիրապետութեան
անկումը (Հուլիանոս խան, 1258) առաջացրեց այն
դաշտավայրերի աւերումը, ուր ապրում էին նըս-
տակեաց քրդերը և հարկազրեց նրանց ընդ միջա
հետանալ սարբը: Այդ ժամանակներն էլ քրդերը
լուկին հայոց նախկին նահանգները Վանի լճի
չըջականներում: Յետագայ 2 1/2 դարերի ընթաց-
քում Քերմանջի պատմութիւնը կարելի է ար-
տայայտել երկու բառերով. ներքին խառնակու-
թիւններ և երկար: Այնպիսի վտարմիկներ, ինչ-
պէս 1400—1403 թվերի լանկիթաւորի արշա-
ւանքը, միայն սաստկացրին ընդհանուր թշուա-
րութիւնը: XVI դարի սկզբում միայն երևան է
գալիս մի ոյժ, որ փորձում է գոնէ քիչ կարգ
հաստատել:

Շահ-Կամալի I-ի և սուլթան Ալեւի I-ի մէջ
տեղի ունացած պատերազմի ժամանակ թիւր-
քերը զրաւեցին արևմտան Քերմանջի, այդ
ժամանակ էլ պարսիկների ու թիւրքերի մէջ
որովից այն սահմանը, որ կրթութիւն ունի
մինչև այժմ համարեա առանց փոփոխութիւն-
ների: Քերմանջը, նուաճելով այժմեան Կարսի և
Երևանի նահանգները, այստեղ զաղթեցրին սուն-
նի քրդերի մի մասը, որպէս զի այդպիսով պատ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Ք Ի Դ Ե Ր

Լ կ ու *

Քրդական լեզուն արիական արմատ ունի և
պատկանում է լեզուների իրանական խմբին:
Քրդերի ահագին մեծամասնութիւնը խոսում է
քերմանջի լեզուով: Բացի իրանական արմատ ու-
նեցող բառերից՝ այդ լեզուի մէջ կայ հայկական
և թուրքական ծագում ունեցող բառերի մի

*) Քրդերը լեզու և մասին խոսելով, Հեղինակը անտես
չը պիտէ անել մի նշանաւոր հանգամանք: Քրդերը
թէ և կեն աղբ են, ունեն առանձին լեզու, սղջայ-
նական որոշ տեղ և արմատութիւններ, բայց չէ կրել
և չը կայ քրդական գրականութիւն: Տասնեակ դարե-
րէ ընկալելով բոլոր մարդկային կուլտուրայի հա-
մար ներթափանցում էր մի անոտուր ու չոր ժայռ,
որի վրա մի կտու մասուր և դարձաբարձրան սերմ չը
անկիւնը: Մասին է միայն մի կտու քուրդ: Կրդին ա-
նուամբ որ ապրում էր տեղեկ Ալեւի I-ի ժամանակ
և զրկ է ամենտես պատմութիւնը, ի հարկէ, թիւր-
քերէն լեզուով: Իսկ միջնակարգ քրդերը մէջ չեղան
մէկը, որ գրէ իր ազգի պատմութիւնը, գոնէ այդպ-
պիսին թիւրքի գրաւոր լեզուակալութիւնները թէ որդան
մարդ են կոտորել քրդերը քանի զաւաճեցին և նա-
հանգիւն էր ամեն անոտուր գործը: Բնորոշ է այն
հանգամանքը, որ քուրդ իր ամբողջ անցելարով և
ներկայով ապրուցանում է թէ ինքը ստեղծված է
միայն փայտի և աւազակ մտաւր: Համար Արդիւնի աղ-
քը կը կարող են լուս ապրել անկանոն, բազմաթիւ փը-
րամ արկանակ պետութիւնները շնորհիւ: Բայց և թէ
նրանք բնիկն ու թէ կը պետութեան ձեռքի տակ և թէ
ամենաճարտիւն նրանց արեւելուրը քրդերը այն
ժամանակ աւազակութեան արձեւար: Ինչչանայ իսկ
աւազակ ազգի կը կրկնեն, կը մասնակի սարսափելի
աղբատութեան մէջ է պատճառ, որ կուրուրական
աղբերը իրանց փոքրամասնութեամբ ու թէ կը կեն
զիջանում քրդերու, բայց հակախոլուրական աղ-
քերը:

նում են իրար մէջ և հարկաւոր դէպքում թարգման ու մենտոր հանդիսանում նրանց. բաժանու՞մը պէտք է լինի ըստ ազգութեան—գերմանացիին՝ գերմանացուն, ֆրանսիացիին՝ ֆրանսիացուն և այլն: Կովիտեան այս բարեկեցի իր տրամադրութեան սակ պարտաւ ունի «համաժողով» անդամներ համար 5000-ից աւելի ընկալարան, որոնց նա մեծ զինուորով վարձել է դանազան հրահրանքներով և մասնաւոր անձինքներով. իսկ բժիշկները չափերը ինքնակամ ցանկութիւն են յայտնել իրանց անհրաժեշտ աւելու և պատուաւորելու օտարազգի հիւրերին: «Միջազգային բժշկական համաժողովը» իր պարտավորւնքները ամբողջ ժամանակամիջոցում կուտենայ երեք կամ չորս ընդհանուր ժողով որոնց համար կենսաբանական կոմիտեի միջնորդութեամբ յատկացրված են Մոսկովայի կայսերական մեծ թատրոնը և արհեստանոցների ժողովարանը: «Բժշկական համաժողովի» բոլոր անդամների ասֆին պաշտօնական ընդունելութիւնը նշանակված է օգոստոսի 6-ին, որ տեղի կունենայ «Торговое Ряды» կոչված ընդարձակ և հոյակապ շինութեան մէջ: «Միջազգային բժշկական համաժողովում», ինչպէս արդէն յայտնի է, ամենից մեծ թվով ներկայացուցիչներ կունենան ֆրանսիացի, գերմանացի և իտալացի: Անգլիացու առաջնորդական սէրը դէպի իր մայրենի լեզուն յայտնի է ամենքին: Այդ պատճառով անգլիացի շատ բժիշկներ հրաժարվել են ներկայ գտնվելու այդ «համաժողովին», որովհետև այնտեղ բոլոր գեկուցումները (доклады) պէտք է լինեն բացառապէս ֆրանսիական և գերմանական լեզուներով: Այդ բանը, ի հարկէ, վիրաւորել է նրանց ազգային ինքնասիրութիւնը, որ անգլիացիների մէջ այնպէս թունգ արասպայովում է մասնաւոր մայրենի լեզուի վերաբերմամբ: (Ականջը կանչի, լսեղծ հայոց լեզու, որ հայի համ աչքից են ընկած, համ սրտից մտապնդած...):

Ներկայ «Միջազգային բժշկական համաժողովը», որ տեղի է ունենալու Մոսկովայում, թվով XII-ն է, և, ինչպէս երևում է, բաւական բազմակողմանի և հետաքրքրական պէտք է լինի: Նրա ներքին բովանդակութեան մասին քիչ թէ շատ տեղեկութիւն կը տանք «Մշակի» ընթերցողներին մեր հետեւեալ նամակով:

Ա. Կատարեան
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Երեքշաբթի, յուլիսի 22-ին, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի անուանակոչութեան օրը, քաղաքիս բոլոր եկեղեցիներում, աղօթարաններում, մզկիթներում և սինագոգներում զոհանդովական մաղթանքներ կատարվեցին:

Քաջն Արաքսի հովտում ապրող շխմերի դէմ*): Պարսկաստանի և Թիւրքիայի մէջ բաժանված Գրիգորասանը իրապէս համարեա կատարեալ անկախութիւն էր վայելում: Աննշան հարկ և զինված մարդկանց ընտանութիւնն տրվում էին պարսից ու թիւրքաց կառավարութիւններին միմիայն ոչիմ ճնշման տակ: Դճճ Արքաւ և Նազիր-Դճճ չիա քրդերին գաղթեցրին Խորասան, որպէս զի զրանց միջոցով պաշտպանեն հիւսիսային Պարսկաստանը սուսնի թիւրքմէններէր: Ներկայ դարի սկզբներին մօտ ժամանակներում քարոզ իշխանները բուրբովին մերժեցին թիւրքերի նոյն իսկ անուանական իշխանութիւնը և 1829 թվականի պատերազմի միջոցին բանակցութիւններ էին վարում ուսու զորապետների հետ իբրև անկախ թագաւորներ: Գրգական զբլխաւոր իշխանութիւններն էին. Հէքքեարի, որի կառավարիչն էր Զուլամբեկում և Բաշ-Կալէում ապրող Էմիրը, Բէլանդուզ փաշայութիւն և Բահդան ու Բեհդինան իշխանութիւնները: Վերջապէս, քրդերի ինքնապաշտութիւնը այն աստիճանին հասաւ, որ թիւրքաց կառավարութիւնը վճանց վերջ տալ այդ գրութեան: 1832 թվականներին Բեհդինուզի քրդերը, տեսնելով որ թիւրքաց զորքերը գնացել են Երիզտոսի Մէջ-մէջ-Ալի փաշայի դէմ, բոլորովին աւերեցին մի-

Քաղաքը վաղ առաւօտից դարձրված էր զրօշակներով, իսկ երեկոյան լուսավառութիւն կար: Մեր ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ կովկասեան սուսնաբանական շրջանում զիտաւորութիւն կայ Ծուշու բեյական զարոյցը տեղափոխել Ալէքսանդրոպոլ: Այդ միտքը ծագել է այն պատճառով, որ Ծուշու հայ և թուրք հասարակութիւնները ճշգրտութեամբ սեր կատարում իրանց յանձն ստան պարտաւորութիւնները յիշեալ զարոյցի վերաբերմամբ: Ծուշու ազգաբնակիչները խոստացել է իւրաքանչիւր տարի 10,000 ռուբլի նպատա տալ, որից 7000 ռուբլին ընկնում է հայ, իսկ 3000 ռուբլին թուրք հասարակութեան վրա. բացի զրանից նա խոստացել է ուսումնարանի համար մի յատուկ շինութիւն կառուցանել: Եւ ահա 16 տարի է այդ խոստումը չէ իրագործվում, և քաղաքի վրա աւելի քան 20,000 ռուբլի ապուսիկ կայ, որ դուշացել է խոստացած նպատար դանաւ տարիներում լրիւ չը վճարելուց: Անշուշտ, այդ զիտաւորութեան իրագործումը մեծ հարւած կը լինի Ծուշու և սուսնաբան Ղարաբաղի ազգաբնակիչների համար, և մենք կարծում ենք, որ այժմ, երբ Ծուշին ունի քաղաքային վարչութիւն, վերջինիս պարտքն է մէջտեղից վերացնել զգործութեան սովորները և թող չը տալ, որ մի ամբողջ քաղաքամարդ գաւառ զբրվի իր միակ պետական միջնակարգ զարոյցից:

Կարեւոր ենք համարում տեղեկացնել մեր զիւրացիներին, որ անցածթիվի համար չը պէտք է ոչ մի վճար տալ, բացի 15 կօպէկէց, որ նշանակված է անցատեարի համար: Պետական խորհուրդը հրամայել է յայտնել այդ մասին ամեն տեղ և ով յանցարար կը նկատվի փող պահանջելու գործում, կենթարկվի պատժի:

«Русская Мысль» ամսագրի նոր ստացված յուլիսի համարի ներքին տեսութեան բաժնում հետեւեալն ենք կարդում. «Վերջին ժամանակներս մեր պահանջարկային մասուլի մէջ սուսնաբանական շատ են զբաղվում հայերի բազմատեսակ մեքիզացումներով: Մուսայվում են թէ այդ ժողովրդի կրած դառն ստապանքները Թիւրքիայում և թէ այն մեծ ծառայութիւնները, որ հայերը մատուցել են մեր տիրապետութեան հաստատութեան կովկասում: «Русская Мысль» թվականներում և փաստերով ապացուցեց ուսուսայելի վրա բարդած մեղադրանքների անհիմն լինելը: Մենք, ի հարկէ, հեռու ենք այդ ապագանաւոր և նախաձեռնող ցեղը իրէջակալան կատարելու համարելու մտքից (որտեղ կայ այդպիսի ցեղ), բայց հայերը—բարի ուսուսայա-

տակներ են, որոնց հետ, ինչպէս և կայսրութեան միւս ցեղերի հետ, մեղ վայել է ապրել համաձայնութեամբ և հաւասար իրաւունքներով: Գժազդաբար, միակողմանի, կրքաւ «հակահայկական արշաւանքը» չէ դարձրում մեր մասուլի մի յայտնի ժառուռ: Մայրաքաղաքի պահպանողականները այժմ մի նոր դաշնակից էլ են գտել—Թիւրքիի «Кавказ» լրագիրը: (Ի հարկէ իր ոչ-պաշտօնական մասով): Այդ պատճառով մենք մեծ հաճութեամբ արձանագործ ենք պահանջողական «Петербургскія Вѣдомости» լրագրի արգարացի վերաբերմունքը դէպի հայերը: Պէտք է սակայն նկատել, որ և «Московскія Вѣдомости» լրագիրը, իբրև բացատրութիւն, զեռեղել է իր № 141-ում մի բաւական անաչառ յօդուած ուսուսայելի մասին, թէ և այդպէս էլ մեղադրվում են հայերը «Ինքնավար Հայաստան» ստեղծելու ազիտացիայի մէջ: Ռուսաց մասուլի պարտաւորութիւնն է յարգանք և համակրութիւն ներշնչել մեր պետութեան ազգաբնակիչները կազմող բոլոր ցեղերի մէջ դէպի ուսուսաց մեծ ազգը: Եւ լաւ ծառայութիւն այն լրագիրները և ամսագիրները, որոնց էջերը լին են անմիտ գոտողութեամբ և կարճատես չարութեամբ կամ լեհերի, կամ հրէաների և կամ հայերի մասին:

Ռուսաստանը ամեն միջոց գործ է դնում, որ ուսուսաց շարքը կարողանայ արտահանվել արտասահման, մասնաւոր Պարսկաստան, ուր շարքի գործարաններ չը կան և գործածվող շարքը ստացվում է Եւրօպայից: Այդ նպատակով կառավարութիւնը ազատում է սուրբից այն շարքը, որ արտահանվում է: Ռուսաց շարքարգործները սակայն անբաւական մնացին այն միջնորդներից, որոնք գնում էին նրանցից շարքը Պարսկաստան տանելու համար: Այս պատճառով որոշել են անմիջական կապ հաստատել գործարանների և պարսիկ վաճառականների հետ: Իհնական շարքարգործներից մէկը ներկայացուցիչը նորերս այդ նպատակով այցելեց Կասպից ծովի պարսկական քաղաքները և ծանոթացաւ պարսիկ վաճառականների հետ:

Յուլիսի 17-ին լրացաւ հռչակաւոր նկարիչ Ի. Կ. Ալվազովսկու ծննդեան 80-րդ տարեդարձը: Մայրաքաղաքներ և զինուորային Օդեսայի լրագիրները համակրական յօդուածներ նուիրեցին Ալվազովսկու գեղարուեստական գործունէութեան և տպագրեցին նրա մանրամասն կենսագրութիւնը: Մի քանի ժամանակ ստալ Ալվազովսկին ուզարկեց Նիցցա քաղաքից 4 հատ պատկեր Մոսկովայում հրատարակվող

լաղու լուսնի արշաւանքը հարկադրեց զրոնց թաղուիլ անմատչելի սարերում: Համայնքները կառավարվում էին իրանց պատրիարքների ձեռքով և վճարելով հարկ հարկան քրդերին, համարեա կատարեալ անկախութիւն էին վայելում և զգալի բարեկեցութիւն էին ձեռք բերել: 30-ական թվականների վերջում Մուսուլ գնացին անդրկասան և անթիլիական միսիստարներ. նրանք ձգտում էին նեւտարականներին բողոքական դարձնել, և այդ նպատակով ամբիթիական միսիստար Գրանտ միսիստարական տուն շինեց Աշիթայում, որ Տիարի չրջանի սիրան է: Բոլոր սարերում լուր տարածվեց թէ ֆրանկները և կել են Տիարիի քրիստոնեաների մօտ, Աշիթայում պալատ են կառուցանում և մազդեր են քրիստոնէութիւն տարածել Գրիգորասանում:

Բաղիր-խանը, որ վաղուց աչք էր անկած ունեւոր սարերի միջին վրա, իսկոյն հաւաքեց քրդերի մի մեծ հրօսակ և, իրաւով պաշտպանութիւնը պատրուակ բունելով, 1843 թվին սարապիլի կերպով աւերեց Տիարիի չրջանը ու կոտորեց ազգաբնակչութեան կէսը*): Այդ յարձակման ա-

«Братская помощь пострадавшимъ въ Турцiй армянамъ» (Եղբայրական օգնութիւն Թիւրքիացու միապաժ հայերին) ժողովածուի խմբագրութեան՝ ժողովածուի մէջ զեռեղելու համար: Այդ պատկերները ահա թէ ինչ են ներկայացնում—«Թիւրքերը նստացնում են հայերին չազնաւորել վրա»: «Թիւրքերը թափում են հայերին Մարմարա ծովը»: «Նոյի իջնելը Արարատից» և «Զօտարում է»: Տարեգրքի օրը Ալվազովսկին ստացաւ բազմաթիւ շնորհակալական հեռագիրներ բարձրաստիճան անձներից, Թէօդօսիս քաղաքը մի առանձին պատգամաւորութեան ձեռքով ներկայացրեց նրան մի համակրական ուղերձ:

Ֆրանսիական մի սուսնաբան տուն, աչքի առաջ ունենալով մի բարձր զինը ֆրանսիացու և էժանեթիւնը Ռուսաստանում, որոշել է հարուսային Ռուսաստանից ոչխարներ տանել նստելով ֆրանսիա: Հարուսային Ռուսաստանի մի քանի ոչխարապահներ փորձի համար տալիս են 4000 զլուխ կրտած ոչխարներ:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը հրատարակել է մեղաբարձութեան մասին վրացերէն լեզուով մի գրքույկ, որի հեղինակն է Զատալվիլի Մի առանձին թերթի վրա զեռեղված են մեղաբարձի նկարներ:

Ա.Լ.ԲԱՆՆԻՐՈՊՈՒՆՅ մեղ գրում են. «Երկար սպասուելուց յետոյ վերջապէս ստացվեց քաղաքագլխի և դուսայի ձայնաւորների ընտրութեան հաստատութիւնը»:

ԲԱՆԱՆՅ զիւղից մեղ գրում են. «Գանձակի դաւառի լեռնային մասերում հունձն այս տարի շատ պակաս է. գրան նպատակցին մատուր գարնան ցրտերը, տեղ-տեղ կարկուտը և զլիաւորապէս մուկը, որը գնալով սաստիկ բազմանում է: Նրան սնչացնելու համար մինչև այժմ ոչ մի գործնական միջոց չէ ձեռնարկված, քանի որ ժողովուրդն այդպիսի միջոցների մասին գաղափար չունի: Եսա ցանկալի է, որ կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան Գանձակի ճիւղը լուրջ ուշադրութիւն դարձնի այդ կորստաբեր երեւոյթի վրա և հէնց այժմանից սկսի միջոցի սնչացման համար միջոցներ ձեռք առնել, քանի որ, ի թէ յայտու շարունակվի, միւս տարի սո՛վ անխուսափելի կը լինի մեղ գաւառում: Տեղական ժողովուրդն անգոր է այդ շարիքի դէմ կուրու գործնականապէս Նա դիմում է նահապետական միջոցների. մի քանի զիւղերում ինչ որ Էմկան կիրակիներն են պահել, միւսներում, բացի այդ տարօրինակ կիրակիներից, մինչև անգամ Էմկան սպասեր են

Չորութեան բաւական նպատակցին Մուսուլի փաշա Կերտուլի Մէհմէդի ինտրիգները. սա մի սրգան և անգուժ մարդ էր և յոյս ունէր, որ քրդերն ու նեւտարականները միմիայն կը թուլացնեն և այդպիսով կը հեշտացնեն լեռների նուստումը: 1846 թվին Բաղիր-խան Նուրալլախանի հետ միաբանվելով, յարձակվեց Թիւրոս չրջանի վրա և համարեա ընտրելով արաւ քրիստոնեաների մնացորդները*): Այս անգամ Եւրօպական պետութիւնները հարկադրեցին սուլթանին եւսանդուն միջոցներ ձեռք առնել: Մուսուլի, Գիւղաբերին, Նրգրում ու Վանի փաշաները գնացին քրդերի դէմ: Բաղիր-խանի կողմը որդին, ինչպէս չի, իր իշխանութեան անկախը վաղ ցեղերի հետ ապստամբից իր հորեղբոր դէմ, յոյս ունենալով բունել նրա տեղը: Զէլրէն գրաւեց և երկու լանները հարկադրված եղան անձատուր լինել: Բաղիր-խան աքսորվեց Կանդիա կղզին**): և Գրիգորասանի զլուսուր քաղաքները գրաւեցին թիւրք զորքերը:

(Կը շարունակվի)

* Գաղթելուց լուս պատճառ միայն այդ չէր Գրգրէրն ուսուսայելու յետոյ սուլթան Ալիով Գրգրասանի կատարելէ նշանակեց պատմագրը Կրկին ուսուսայելու և զգովն աւելցրել անընդհատ աւազակութիւններով տանելու էին ժողովուրդը: Կրկին միայն այն ձաքը գտաւ, որ սուսայել զեղերը զուրս հանեց երկրի և ընտելեցրեց Կարեւ ու Երեւանի նահանգներում:

*) Անգլիական Հիւսուստոս մայր Տրոտտըր սուսում է, որ այդ ժամանակ Բաղադար բոլորովին կորցած էր Փարթ-Արիսի միւս մասը: Եւ հաշուելով մի քանի մեծ քաղաքները և նրանց շրջանները, նշանակա Ան ծովի սովորում գտնելով անուսուս և լեռնաւոր շրջանակ թիւն ունէին, ամբողջ երկրը Անգլոսայի սկսած միւսէ: Պարսկաստանի և Արքայի սահմանները գրանցվում էր բացառապէս զբղերի ձեւերով: Գրգրէրը որ մի ժամանակ շրջապատված էր հարուս և բերրի հովտով կանչում էր անապատի մէջ: Այդպէս էին տակերը բողները:

*) Հեղինակը միտնաբերել գործունէութիւնն է համարում Բաղիր-խանի (Գէլեր-խան-բէկի) քաղաքարուսութիւնները պատճառ: Բայց դա սխալ է: Միտնաբերանք այդպիսի յուսումնաբերութեանը կը կրկնուի պատճառով որ նեւտարական քրիստոնեաները երկրորդ փուլուց սովոր էր միտնաբերելու: Պայել ներկայացուցիչները գէտ խոսակցիները արշաւանները ստորինը մի մեծ բազմութիւն վաղուց ընդունել էր Հուսի գերլինաւորութիւնը, նրանց մէջ շրջում էին կարեւոր և յարգաւոր կրօնաւորները: Երկրորդ, միսիստար Գրանտ, մի վրէժն ստանձանի Հիւր բարի և հեւսանդուն անձնաւորութիւնը, յարգանք էր վայելում իր իսկ քրդերի մէջ: Ինչպէս Բաղիր-խան-բէկը Գրանտի մօտեւ բարեկամ էր: Կատարածները պատճառը այլ էր:

միտնաբերելը բացել էին բազմաթիւ զարոյցներ Հաստատել էին սպարանի հրատարակում էին ստեղծելու լրագրի ժողովրդի աչքը բացվում էր քրդերը բարբարոսութիւնները այլ ևս ճակատագրական անխուսափելի պատիվ չէին համարում: անգլիական միտնաբերութեանը աւելի բաւ սպարակ յոյսեր էին ներշնչում: Այդ շարժումը Թիւրքիայում անգլիական միտնաբերութեանը հետեւեալը: Մուսուլի փաշաները գնացին քրդերի դէմ: Բաղիր-խանի կողմը որդին, ինչպէս չի, իր իշխանութեան անկախը վաղ ցեղերի հետ ապստամբից իր հորեղբոր դէմ, յոյս ունենալով բունել նրա տեղը: Զէլրէն գրաւեց և երկու լանները հարկադրված եղան անձատուր լինել: Բաղիր-խան աքսորվեց Կանդիա կղզին**): և Գրիգորասանի զլուսուր քաղաքները գրաւեցին թիւրք զորքերը:

** Այս կատարածները մասին տես մեր առանձին ծանօթումը: Ինչպէս յօդուածի վերջում:

պահելը, բայց մինչև այժմ ոչ կիրակներն են ուղեկ, ոչ պատերը: Կրկնապատ, յուսահատված, քորում է ծածկակառու իր բոլոր բարեկամները: Այժմեանից արդեն գիւղացիները հաց են գնում, փոխանակ սեփական ցորենով ամբարները լցնելու ու հաց ծածկելու: Գծաւոր չէ երևակայել, թէ ինչ կը լինի նրանց գրովին ձմեռայն արմատներն, երբ սովի հետ միասին նրանց դուռը կը բացվի ցուրտը: Շատ անգամ հարց է բարձրացել գաւառի կենտրոնական գիւղերում հասարակական շտեմարաններ հիմնելու մասին և կրկին մեռել է: 1870-ական թվականին Բանանց գիւղում հիմք դրվեց այսպիսի մի շտեմարանի, որը, տարաբաղաբար, երկար չը շարունակեց իր գոյութիւնը: հաւաքած ցորենը ծածկելու համար Սահայն շտեմարաններ անհրաժեշտութիւնը զգացվում է միշտ, մասնաւոր այսպիսի աստիճանը, ուստի ցանկալի է, որ վաղ թէ ոչ գոյութիւն ունենան նրանք, քանի որ այդ շտեմարանների միջոցով գիւղաբնակչութիւնը կարելի է առնել վախճանների կեղեքման առաջը:

Մեծ Վրի գիւղից մեջ գրում են. «Անցեալ տարի, երբ օրդուրով կոչված հրահրութիւնը ոչնչացրեց մեզանում խաղողի բերքը՝ մեղրեցիները ստիպվեցին լուրջ ուշադրութիւն դարձնել այդ շարքերի վրա և հասարակութիւնը թէ ծծմբափոշի և թէ փոքր բերել սուսեց թիֆլիսի Գիւղատնտեսական ընկերութեան միջոցով, ու փչեց վազերին: Այս տարի թէ մեզանում և թէ մեր կողմերում, խաղողի բերքը միջակից լաւ է և նպաստաւոր եղանակներ, ինչպէս և ծծմբը փչելու շնորհիւ ազատ է օրդուրով հիւանդութիւնից: Այս տարի գարունը ուշ սկսվելով և անձրևային լինելով՝ ցանքերը ուշ սկսվեցին, և այդ պատճառով բամբակի ցանքերը վաղ արդիւնք չեն խոստանում:»

ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցյալ ամիս համայնքների ժողովի յուրիսի 22-ի նիստում արտաքին գործերի քարտուղար Կըրը օրն, պատասխանելով պատգամաւոր Ֆիլիսի հարցին, յայտնեց, որ Թօքսոսի կոտորածները պատճառով մասնական դատաւարարված բանտարկեալներին ոչ ոք չէ պատված:

Ամերիկացում հաստատված հայկական նպաստող ֆոնդը շարունակում է փող ժողովել փոքր-Ասիայի որը մանուկների համար: Վերջին վեց ամսում ժողովված է 3,652,000 դոլար: Գրիսի հայուհեակն արտեկան հարկեր է որբերի խնամատարութեան համար 2500 դոլար:

ԹԻՒՐԿԻԱՅԻ ԲԱԾԱՆՈՒՄԸ

Մինչդեռ թիւրք լրագրիները կոկորդ պատուելով փառաբանում են Թիւրքիայի պիւր, մեծութիւնը և ահագին զերը քաղաքակրթութեան ասպարէզում (II), եւրոպական լրագրիներում շարունակ հանդէս են բերվում Թիւրքիան բաժանելու նոր ծրագրիները: Առաջինը Թիւրքիան արժանի է անդլիական «Quarterly Review» ամսագրի մի յօդուածը, որի հեղինակը, ինչպէս երևում է, ծանօթ է գիւղօժմատիական զարգացմանը: Նա ստում է որ պէտք է թողնել Թիւրքիայից մանր պետութիւններ կազմելու միտքը, քանի որ Յունաստանը և Բուլղարիան ցոյց տրւին թէ անկախ պետական կեանքի անընդունակ են, և ստաջարկում է բաժանել Թիւրքիայի հողերը մեծ պետութիւնների մէջ: Այդ ծրագրով Աւստրիան պիտի ստանայ Բալկանեան թերակղզու արևմտեան մասը, Անգլիան, բացի Եգիպտոսից, նաև Սիրիան, ուր նրան հարկաւոր է երկաթուղի անցկացնել մինչև Պարսից ծոցը, իսկ Ռուսաստանը կը ստանայ Փոքր Ասիան և Հայաստանը: Միւս պետութիւնները—Ֆրանսիա, Գերմանիա և Իտալիա ոչինչ չեն ստանում: Հեղինակը կարծում է որ այդ երեքին կարելի է մի կողմ թողնել, եթէ Անգլիայի, Աւստրիայի և Ռուսաստանի մէջ համաձայնութիւն կոչանայ:

Թիւրքիայի այս նոր բաժանող լուսկան է ստալիս այն թէ ուն պէտք է պատկանեն Կ. Պոլիսը, Բոսֆորը և Գարգանքը: Այս մի սղեւա-

լի հարց, որ ամենից դժուարն է, որ յետաձգում է և դեռ պիտի յետաձգէ Թիւրքիայի բաժանումը, ոչ թ տալով ճիշտաց մարդուն: պահպանել իր գոյութիւնը սարափելի ուժազորութիւններով մէջ: Յամենայն դէպս, Թիւրքիայի հարստահարված քրիստոնեաները դեռ երկար կը սպասեն մինչև որ իրականապէս Թիւրքիայի վերջնական կեցութեան Թիւրքիայի բաժանման մասին լրատաժում են Եկատերինա II-ի ժամանակը: Բայց մի պիտի կարողանայ հանել այդ կրեւոստ հարցը մտքերի աշխարհից և դնել իրական փաստերի կարգում—Ո՞ր կը դառնայ այն Ալէքսանդր Մակեդոնացին, որ լուծէ այդ Գորդեան հանգոյցը:—Այս հարցին ոչ ոք չէ կարողանում պատասխան տալ:

Ա Ն Գ Ի Է

Մի նոր հերոսութիւն գիտութեան համար... Յունիսի 30-ին երեք անվախ մարդիկ—Անդրէ, Ստրինդերբը և Ֆրէնկել, օգուտ քաղելով հարստային քամոց, օգտագործելով բարձրացան Շոլիքերից կողուց և թռան դէպի հիւսիսային բևեռ: Կա յախտնական սառցային աշխարհն է, որը ոչ ոք դեռ չէ տեսել: Քաղաքագործութիւնը անօրինակ է. մարդկային մտքի այս ձգտումը առատակ չէ, այլ իրական փաստ:

Ամբողջ աշխարհը այժմ ուշադրութիւն է դարձրել այդ երեք քաջ և անձնազոհ մարդկանց վրա: Բնականաբար այժմ մի հարց միայն կարող է լինել. արդեօք կաջողվի նրանց հասնել հիւսիսային բևեռին: Լրագրիները լին են ենթադրութիւններով և դատողութիւններով: Բայց հետաքրքրականը Անդրէի գործակիցների կարծիքն է: Գրանցից մէջը, ինչպէս հաղորդում է «С. Петербургскія Вѣдомости» լրագրի թղթակիցը, այն համոզմունքն ունի, որ Անդրէ արդէն հասած կը լինի հիւսիսային բևեռին:

Ի հարկէ, Անդրէ մի պատահական ճանապարհորդութիւն չէ սկսել, ամեն ինչ թողնելով ձախտագրի և հանգամանքների կամքին: Նա երկար ժամանակ պատրաստվել է, օգուտ է քաղել գիտութեան առած բոլոր տեղեկութիւններից և ստեղծել է իր սեփական թէօրիան: Անդրէի կառավարչական պայմանը, ի հարկէ, բևեռային երկրներում արդող օդային հասանքներն են, որոնք պիտի տանեն օդապարիկը: Այդ հասանքները ստույգապէս թողնում են մանրամասն կերպով, օդապարիկը յարմարեցրած է այնպէս, որ նա կարող է օդի մէջ պահել մօտ 44 օր, մի ժամանակամիջոց, որ բաւական է բևեռը հասնելու և վերադառնալու համար: Բայց յայտնի է, որ գիտնական փորձերով և թէօրիայի վրա հիմնվելով չէ կարելի նախատեսել այն բոլոր պատահարները, որոնք կը լինեն իրականութեան մէջ, այնպէս որ Անդրէ դեռ պիտի յարմարվի այն դրութեան, որ կը ներկայացնի հիւսիսային բևեռի օդը:

Անդրէ ցած չը պիտի իջնէ, այլ բևեռի ստույգապարիկները պիտի կատարէ վերելից, օդապարիկից: Մի ուրիշ գիտնական ստում է, որ Անդրէ աջողութիւն կունենայ այն դէպքում, եթէ միշտ նրան քչէ հարաւային քամին, բայց բևեռի վրա ամառը փոփոխակի քամիներ են լինում, և այդ պատճառով օդապարիկը կարող է չը հասնել բևեռին: Այդ գիտնականի կարծիքով հազիւ թէ Անդրէ կարողանայ միանգամայն ճիշդ և անսխալ կերպով ստույգապարիկը բևեռը: Յայտնի է որ բևեռում երկնային բոլոր անշարժ մարմինները շարժուն են երևում: Յուլիս ամսին բևեռում գիշերը չը կայ և արեգակն ու լուսինը երևում են երկնքի վրա. դժուար, նոյն իսկ անձնարկն կը լինի ճիշդ սրօշը թէ Անդրէն բոլորովին հասնել է բևեռին թէ ոչ: Իսկ եթէ նրան նոյն իսկ աջողվի որոշել բևեռի տեղը, դարձեալ անհնարին կը լինի որոշել թէ ինչ է բևեռը—ցամաք թէ ծով: Ամառվայ ամիսներում բևեռային մասը սովորաբար ծածկված է լինում թանձր մշուշով, որ մի քանի սամէն բարձրութիւն է ունենում, ուստի օդապարիկները չեն կարող իմանալ, թէ ինչ կայ իրանցից ցած:

Բայց ինչ որ էլ լինեն գիտնականների գուշակութիւնները, երեք օդապարիկների հերոսական ձեռնարկութիւնը մեր ժամանակի ամենազեղեցիկ գործերից մէկն է: Սիրուն, խրախուսական սպասարկութիւն է թողնում մարդկային այս անձնազոհութիւնը, որ կատարվում է գիտու-

թեան համար: Թող հաղորաւոր անարդարութիւններ կատարվեն աշխարհի վրա. Անդրէի և իր ուղեկիցների մեծագործութիւնը միշտ անխախտ կը պահէ մարդկայնութեան իղջալը, այն մեծ խորհուրդը, որ մարդկանցից զոհեր է խրատում նոր և նոր իմաստութիւններ սովորեցնելու համար:

ՌԵՍԱԼԱՅԻՆ ԿՐԻՈՒԹԻՒՆԸ

«Русскія Вѣдомости» լրագրի թղթակիցը այցելել է Թեսալիայի մի քանի տեղերը և նիւսարգրում թէ ինչ դրութեան մէջ է այժմ յուսական աստուածների հին հայրենիքը, Յունաստանի շտեմարանը և կերակրողը: Թղթակիցը պատմում է որ ամեն տեղ տիրում է մեռելութիւն. ընտանիքներ փախել են և երկրի տէրը միայն թիւրքերն են: Հունձը հաւաքում են թիւրք զինուորները, զիւղերը ներկայացնում են կատարեալ աւերման պատկեր: Լարիսայում բոլոր տները դատարկ են. յոյները փախել են, ձախտագրի կամքին թողնելով իրանց շարժական և անշարժ կաջերը: Իսկ ձախտագրի կամքը թիւրք զորքը բարբարոսութիւններն են: Տները բոլորովին մերկացած են. մնացել միայն պատերը: Կողմապետները տարել են ամեն մի փողը ի շատէ արժեքաւոր իր. իսկ մնացածները դուրս են տուել փողոցները, ոչնչացրել են: Թղթակիցը տեսել է անպէտք թղթերի մի ահագին կոյս և իմացել է, որ դա իրական զինազգայի աշակերտներին տեսարկներից է կազմված: Ոչինչ չէ խնայել թիւրքական բարբարոսութիւնը: Լարիսայում միայն հրէաների թաղն է ուրախ և եռուն: Հրէաները լաւ առևտուր են արել թիւրքերը նրանց էին ծախում իրանց կողպատած իրերը. մի դաշնամուրի զինը եղել է երկու ոսկի: Պղծված և կողպատված են համարեալ բոլոր եկեղեցիները. թղթակիցն չեն թողնուել մտնել մի եկեղեցի, որ վերածված էր արտառան, ուր թիւրք հեծելազորքի ձկաններն էին պահվում: Եթէ այդպէս է Լարիսան, Թեսալիայի զլխաւոր քաղաքը, ուր թիւրքաց զլխաւոր հրամանատարներն էին մնում, հեշտ է երևակայել թէ ինչ կը լինի զիւղերի դրութիւնը: Թեսալիան չոր պատերի և չոր դաշտերի երկիր է դարձած:

Իսկ ուր են այդ կողպատված քաղաքների ու զիւղերի տէրերը: Նրանք ցրված են Յունաստանում, զլխաւորապէս ծովափնեայ տեղերում և սպասում են թէ երբ Ալլաշի բարբարոս որդիները կը հեռանան երկրից: Լրագրիները սարափելի զոյններով են նիւսարգրում թշուառ փախտականների դրութիւնը: Տաննակ հազար մարդիկ ապրում են բաց երկնքի տակ, չունեն օթևան, մի կտոր հաց: Հիւանդութիւնները կոտորած են անում մասնաւոր երկաթների մէջ: Անգլիացի բարեգործները բացել են ճաշարաններ, թաղաժամանակի ամուսին Սօֆիա ամեն ջանք գործ է դնում, որ մեղմացնէ ժողովրդի դրութիւնը, բայց այժման մեծ է թշուառութիւնը, որ բոլոր գործադրված միջոցները շատ անշարժ են: Եթէ չլուծվի այդ խնդիրը վերադառնան Թեսալիա, այնտեղ պիտի գտնեն անասունի այս հարուստ մասը երկար չը պիտի կարողանայ ոտքի կանգնել, իր նախկին բարեկեցութեան հասնել:

ՆԱՍՏԱԿ ԱՆԳԼՈՒՅԻՑ

Լ օն դ օն, յունիսի 10-ին Այս ստուռ Պօլսէն հեռագրիները կը ծանուցանեն, թէ սուլթանը ընդունել է զեպաններու պահանջած սահմանազկի գիծը: Անշուշտ պիտի չը կրնանք ըսել թէ խնդիրը վերջացաւ: Սկզբնաւորութիւն մըն է այն մեծ խաղին, որ սուլթանը նորէն կը պատրաստէ Եւրոպայի մէջ թիւրքի եկած հեռագրիները կարգաւ իրարու տակ շարենք, կարգադրող նախ պիտի կարծէ, թէ պարզ հեղափոխութիւն մը կը ներկայացնենք շինծու հեռագրիներով, բայց կըր ամեն մէկ հեռագրին տակը գնենք հրատարակող

թերթին անունը և հրատարակութեան թւականը, ան առեն ուշադիր եղողը պիտի տեսնէ ինչ գերազանց ճարտիկութեամբ մը սուլթան-Համիդ կարող եղած է խաղալ Եւրոպայի հետ: շինա, երբ 150.000 զօրք էլքնված-փաշայի հրամանատարութեան տակ համախմբված են հեղինական սահմանազկի զորք, սուլթանի կողմէն հասնում թիւն մը եւրոպական առաջարկները ընդունելու համար չի կրնար մեծ նշանակութիւն մը ունենալ, կը դիտեն թիւրքերէն սուսը, ինչ որ շատ իրաւացի նկատուութիւն մըն է: Կեռ շատ խաղերու կրնանք սպասել:

Ժողովրդային գրգռումը, որ կը շահագործվի, պիտի կրնայ այդ խաղերուն մէջ առաջնակարգ տեղ մը բռնել: Այսօր Աթանաքարտ կը պատմէ պղտիկ դէպք մը, որ կամ իրաւ ինքնաբերաբար եղելութիւն մըն է, կամ թէ սուլթանին կողմէ հնարք մըն է. երկու պարագային մէջ ալ այդ դէպքը ցոյց կուտայ Պօլսի մարքերու մէջ տիրող ուղղութիւնը: Երկուսիցը ահա:

Անցած երկուշաբթի, յուլիս 7/19, սուլթանը իր աշխատութեան սենեակը մտած տեսն, գրասեղանին վրա գտաւ նամակ մը հետեւեալ պարունակով: «Շողոմիկ և լրբը Յունաստանը հազարի չափ խեղճօճ անաղաններ զրկեց կիրիտ, ու ամբողջ վեց պետութիւնները իրենց զբաւարներովը, պաշարումներովը, թնդանութիւններովը անկարող եղան զաննք դուրս հանելու: Կու որ աշխատակալեցիք Թեսալիան և արիւսած են անոր յարկական բանակով մը, դու տեղի պիտի չը տաս, ու նորէն անհասարակութեան պիտի չի թողուս իւրով նախահարկերու ոսկորին ու գերեզմանները: Այսպէս ահա ժողովրդային գրգռումը դէնք մը պիտի ըլլայ նորէն: Առ անկէ ետքը, պատերազմական առգանքի խնդիրը, և ինչքան մանրամասնութիւններ: Եւ երբ այս ամենը աւարի իսկ, ոչ ապաքէն նոյն իսկ պետութիւններուն կողմէ եղած զիջումը բոլորովին Թիւրքիայ ապս ըստ կը թողու թէսալիան, ու որ մը, երբ պատերազմ ծագի, թըրքական բանակները անարդէլ մէկ շարժուման մէջ կը արկապետեն ամբողջ երկիրը: Եւ Թեսալիան հիմակուան վիճակին մէջ իսկ աւեր տեսնակ, ամայնատան մըն է եղած, ու Յունաստանի համար հասցի թիւրքեր մը ըլլալէ կրնայ դադրած համարվիլ տասնեակ տարիներ պէտք են, որ կենդանանայ:

Այս ամեն նկատուելիքով մէկտեղ խաղաղութեան դաշնագրին նախադիւր հաւանօրէն մէկ երկու օրէն կը ստորագրվի, ու մեծ խաղը կը սկսի:

Մենք, ընկանաբար, այս ամենուն վրա կը նայենք մեր ազգային շահերու տեսակէտներովը: Յայտ հեռապատկեր մը իսկ չենք կրնար նշմարել: Երեսփոխանական ժողովին մէջ արտաքին խորհրդական պ. Քըրքուի յայտարարութիւնները նոյն իսկ իրենց պաշտօնական լաւատես ձեռն մէջ ցոյց կուտան, թէ ինչ է Հաստանի վիճակը հիմա: Պ. Քըրքու բացարձակ յայտնեց, թէ չէ կարող Հայաստանի կայսրութիւնը իր սպանով նկարագրել: «Շատ մեծ է արիւսակետող տառապանքը, թէ և միւս կողմէն ալ ժողովրդը սկսած է քիչ մը չունչ առնել: Վերջին դէպքերուն մէջ յանցաւոր պաշտօնեաները հեռացուցված են ու անոնց տեղ եկեղեցիներ կը ջանան աւելի հանգարտ կացութիւն մը առաջ բերել: Յիշատակութեան արժանի է, որ Թոքսոսի տարաբաղղ դէպքին մի վեր, քրիստոնեաներու զէմ կազմակերպված յարձակում տեղի չունեցաւ: Ընդարձակ սահմանի մէջ: Ինչպէս կը տեսնուի այս քանի մը տողերէն, պ. Քըրքուին ինքն ալ կընդունի, թէ յարձակումը տեղի չէ ունեցած ընդարձակ սահմանի մէջ: Չքսեր, թէ ջարդերը դադրած են, այլ ընդարձակ սահմանի մէջ չեն գործադրվիլ: Պարզ խօսելով, կը նշանակէ՛ երբ մարդ մը պիտի այրեն, փոխանակ մէկէն կրակը նետել լմնցնելու գալին, կը վտեն կամայիկ կամայիկ, բշիկ քչիկ այրելով:

Պ. Քըրքու միանգամայն կը յայտարարէ, թէ անցած տարի պետութիւններէն սպանված բարեկարգութեանը ծրագիրը (?) գործադրութեան գրվել է, բայց արդիւնքը գոնացուցիչ եղեր է թէ ոչ, այդ մասին չի կրնար բան մը գիտնալ: Բրիտանոնները պէտք եղած համեմատական թւով ստիկանութեան և ժանտարմատութեան մէջ անպիւր կը յայտարարեն: Թէ անցիլ չէ եղած և շատ պարագաներու մէջ հայերը իրենք են, որ հրաժարած են:—Պ.

Վերջին սակայն չի բացատրել, թէ ինչու հայերը կը հրաժարին: Պէտք է որ իրենք հոգան իրենց պաշտօնին վերաբերող զգեստի, զէնքի, ձիու ծախքերը. ամսական չեն ստանար, և ամեն տեսակ տառապանք ու դաժնութիւն կը կրեն, որոնց համար մանրամասն տեղեկութիւնները լեցում են ամենուս ըստ:

Մեզի ամենէն շարեւեակա՞ն համարվող պետութեան ներկայացուցչին լեզուն իսկ ոչ մէկ յուսատու բառ կարտասանէ: Կացուցիչներն զուրկ են արժան ծանր է, որքան երբէք չէ եղած մեր ազգային կեանքի պատմութեան մէջ: Մաղթենք, որ մեր պատասխանատու իշխանութիւնը, որպիսին է Կ. Պոլսոյ պատրիարքարանը, կարող ըլլայ խոհական աշխարհութեամբ անցնել այ՞ լըտանդներով լեցուն ժամանակը: Թերեւս տաքնապարտ անցնելու անոնց նորանոր աճող արհեստատեղիներու, որոնք ալ մեզի ուժաստատ պիտի ընեն, ու կարենանք որ մը հանգիստ չնչկը և մեր կորուստները դարմանել:

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՒՐԻՐ

«Times» լրագրի Պարիզի թղթակիցը յայտնում է, որ սուլթանը, պարսպաստանութիւն յայտնելով նշանաւոր բէթօրիներ շնորհելու հրահրել է երկրասարք թիւրքերին դադարեցնել իրանց պրօստագրութեան: Մարտը թէյ յայտնել է, որ երկրասարք թիւրքերի կուսակցութիւնը նամանակէն ընդունել այդ ժամանակաւոր հայտարարութիւնը: Մարտը թէյ, հաւատարմ սուլթանին, համաձայնից վերադառնալ Կ. Պոլիս:

«Թիւրք կառավարութիւնը, ակնաջ չը դնելով պետութիւններ ըստըներին, կրեալի նահանգաւոր նշանակեց Ջաւադ-փաշային Սակայն կրեալում գտնվող երօսական հիւպատոսները և ծովայինները այցելութիւն չը տուին նրան, որովհետեւ նահանգաւոր չեն ճանաչում նրան: Միւս կողմից հաղորդում են և այն անհաստատ լուրեր, թէ կրեալի քրիստոնէական հեռազրով յայտնել են թիւրք կառավարութեան իրանց դաժնակցութիւնը Ջաւադ-փաշայի նշանակման առիթով. նրանք ասում են, որ կրեալի պիտի ընկնի կամ Անգլիայի և կամ Ռուսաստանի ձեռքը, ուստի իրանք, քրիստոնէականը, աւելի լաւ են համարում մնալ թիւրքերի իշխանութեան նահանգաւոր Այս լուրը պէտք է համարել թիւրքերի խաղերից մէկը, որոնց տարածողներն են գերմանական լրագիրները: Նոյն լրագիրները առանձին ուրախութեամբ յայտարարում են, որ կրեալի մասնակցութեանը շատ են սիրում գերմանացիներին, — մի փաստ, որ ոչ հաստատութեան է կարօտ, ոչ էլ դարմանալի է:

Մակեդոնական բարձրագոյն կոմիտեայ, ինչպէս հաղորդում են լրագիրները, մինչև այժմ անդրադուլթեան էր մասնակցում այն պատճառով, որ զբաղված էր կուսակցական կուրսերով, ոչ չինչ համարում չունէր ժողովրդի մէջ և նպատակներ չէր ստանում: Այժմ կոմիտեայ նոր կազմակերպութիւն է ստացել և մակեդոնական լըրագիրները յորդորում են, որ նա գործի կպչի, գուշակում են, որ չուտով պատերազմ կը լինի Բալկանեան թերակղզում և սկսողները կը լինեն ըզգարները:

«Berl. Lok. Anz.» լրագրին, որ բայցի արդէն որոշված 4 միլիոն թիւրքաց լիբա պատերազմական աուգմանքից, թիւրքեան պահանջում է էլի 400.000 լիբա էստիբուտում թուրքաց հպատակների կրած վնասների համար: Անգլիական և իտալական դեսպանները ընդդիմացան այդ պահանջին, բայց ուստաց զեպան պ. Նէլիզով, որին միացան Ֆրանսիական, գերմանական և աւստրիական դեսպանները, յայտնեց որ Բ. Կրան պահանջը միանգամայն արդարացի է:

Չը նայելով որ հայտարարութիւնը կրեալով թիւրքաց դատարկ գանձարանը հարստանում է 40 միլիոն ըուրլով, թիւրքաց բարձր շրջանները շատ զժգոհ են և շատ մտալ տեսակէտից են նայում այդ հարստութեան վրա: Նրանք ասում են, որ լեբոսան իր առաջվայ խոստացածի վրա ոչ մի բան չաւելացրեց: Թիւրքաց նշանաւոր պետական գործիչներից մէկը այս օրերս հետեան խոսեց, «Լեբոսան հասկացնել է սու-

լիս, որ թիւրքիայի բաժինը — հետզհետէ ակարանալի է: Երբէք այնքան պարզ կերպով չէր արտայայտվել Լեբոսայի վէժիւր թիւրքեան վերացնելու համար, ինչպէս այժմ: Մեր անկումը անխուսափելի է, ասա յաղթական պատերազմի ցաւալի հետեանըները»:

ՄՇԱԿԻ ԼՅՈՒՍՊԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

Կ. ՊՈԼԻՍ, 19 յուլիսի: Կաշանաւորված են շատ հայեր այն պատրուակով, որ հայկական կոմիտեայի մի կարծեցեալ անդամ փորձ էր արել փոջ կորդիլ մի նայ բռնկելից:

ԼՕՆԴՈՆ, 19 յուլիսի: Համայնքների ժողով: Մալականդի վրա յարձակումներ գործելու վերաբերմամբ Համիլտոն հաղորդում է, որ ֆրանսիական ֆալիլիները քարոզը դրոշմ տեղացիներին յարձակում գործելու Յուլիսի 27-ին անգլիացիները ամբողջ օր պատերազմում էին, յարձակվողները ամեն տեղ յետ մղվեցին: Շատապով օգնական զօրքեր են ուղարկվում, որովհետեւ սպասում են նոր յարձակումներին: Անգլիացիների կողմից սպանվեցին 11 սպայներ և 1 սրբուշիկ և վիրաւորվեցին 142 հոգի:

ԲԵՐԼԻՆ, 19 յուլիսի: Անգլիան յայտնեց, որ հրաժարվում է առեւտրական դաշնագրից գերմանական մարտային դաշնակցութեան հետ, որ կազմված է 1865 թ-ի մայիսի 30-ին: Դաշնագիրը կը կորցնի իր սյուր մէկ տարուց յետոյ:

ՎԻԵՆԱ, 19 յուլիսի: Երկրաստան անձրևների պատճառով պատուվեց ամբարտակը այն տեղում, ուր վիէննան խառնվում է Գունայի հետ: Մի քանի կամուրջներ և երկաթուղիական գծեր քանդվեցին կամ քանդվելու վրա են: Գաւառները նոյնպէս հարողում են, որ հեղեղների պատճառով կամուրջներ են քանդվել և ընդհատվել է հաղորդակցութիւնը: Իչ նոյնպէս հեղեղված է շատ անրից հեռացել են ընակիչները:

ՍԻՄԲԱ, 19 յուլիսի: Մալականդում անգլիական զէրքի վրա երկէ յարձակում տեղի ունեցաւ, որ տեղ մի քանի ժամ թշնամին յետ է մղված մեծ կորուստով: Հրամանատար մուլան և մի քանի կողմակիցներ վիրաւորված են: Անգլիացիների կողմից սպանվեց 1 մարդ և վիրաւորվեցին 17 հոգի: Անգլիական զէրքից զէպի աջ, բուրի վրա, հաւաքված է տեղացիների մեծ բազմութիւն: Ենթադրում են, որ սպասարկվել է ընկերակալներից ցեղը:

ԵԱՐՍԼԱՎԼ, 20 յուլիսի: Այրվում է Լիբիմ բաղաբը: Այրվեցին ամենաաղքատ թաղերի 200-ից աւելի տներ: Այրվեցին եկեղեցին, հիւանդանոցը, պատաշարին և զէնաթիօի վարչութիւնները, ցրտային դաստէնակը, դատարանը: Վարչութիւնը և զեղատունը: Կարեքը անաղին է:

ՄԱՍՏԱ, 20 յուլիսի: Անգլիական հետեակ զօրքի 400 զինուորներ ուղարկվեցին կրեալէ:

ԲԵՐԼԻՆ, 20 յուլիսի: Միջկլիս և Սաբոնիա հեղեղված են: Երկաթուղիական շատ գծերի վրա երկեկութիւնը ընդհատված է. շատ կամուրջներ և աներ քանդվեցին. շատ մարդիկ սպանվեցին. նիւթական վնասները անաղին են:

ԼՕՆԴՈՆ, 20 յուլիսի: «Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են երկկան թուփ. «Կեանքայինները կառավարութիւններից հրահանգներ ստացան միանալ Գերմանիայի առաջարկութեանը յունական ֆինանսների վրա օտար պետութիւնների կոնտրոլ հաստատելու մասին: Այդ պատճառով խաղաղութեան բանակցութիւնների վերաբերմամբ հետեալ նիստը տեղի կունենայ չաբաթի»:

Նոյն լրագրին Աթէնքից հեռագրում են. «Կառավարութիւնը ծայրահեղ ջանքեր է գործ դրում պատերազմական սուղանքի աւազին մտաւր վէժարկու համար»:

ՍՏՈՎՃՈՒՄ, 20 յուլիսի: Ենիսէյի ճանապարհի վրա գտնվող 11 շրջանակներ խնդրեցին իրենամբողջ հետապոսել այն ջրերը, որոնց մէջ կապիտան Գորտրէլտա տեսու օչապարիկի նման մի աւարկայ: Այդ շրջանակները այս օրերս կանցնեն վարդէնի վրայով:

ԼՕՆԴՈՆ, 20 յուլիսի: Մալականդից ստացված պաշտօնական տեղեկութիւնների համեմատ, ապստամբները յուլիսի 20-ին յարձակվեցին Չակդարա գիւրքի վրա, որ գտնվում է Մալականդից զէպի հիւսիս: Կարեւ տեղ կէս օրից յետոյ 2 ժամ մինչև հետեալ աւաւտովայ 8 ժամը: Անգլիացիների կողմից վիրաւորված են հինգ հոգի: Թշնամու կորուստը շատ մեծ է:

ՄՈՒՐՄԱ, 20 յուլիսի: Այրվեցին 35 տներ: ՎԱԼԵՆՍՄԱ, 21 յուլիսի: Հանրապետութեան նախագահը, Գարսան, Բուշի և Բամբո մինիստրների ուղեկցութեամբ, ժամանեց այստեղ: ՎԻԵՆԱ, 21 յուլիսի: Գունայի ամբողջ աւաղանում հեղեղումը շարունակվում է:

Կ. ՊՈԼԻՍ, 22 յուլիսի: Տէլֆիլի-փաշան առաջարկեց մի քանի փոփոխութիւններ մտցնել խաղաղութեան դաշնագրի նախագծի մէջ: Գեապանները վճեցին անփոփոխ պահել բնագիրը:

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 22 յուլիսի: Թաղուհի կայարա-

հի Մարիա Ֆեօթօրիլա, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա ժամանեցին Կոպէնհագէն և իսկոյն գնացին Բէրնստօրֆ ամրոցը:

ԲԵՂԳՐԱ, 22 յուլիսի: Պաշտօնապէս հաղորդում են, որ արհաւանների ներս խուժումները չեն վերակալել յուլիսի 16-ից: Թիւրքաց և սերբիացիների կողմից ամեն միջոցներ ձեռք են առնվել կարգը վերականգնելու համար:

ԲԵՐԼԻՆ, 22 յուլիսի: Շարունակվում են տեղեկութիւններ ստացվել հեղեղների գործած սարսափելի աւերումների մասին Միջկլիսում և Սաբոնիայում: Մտ հարիւր մարդկային զոհեր կան Միջկլիսում նիւթական վնասները 12 միլիոն են հաշուում:

Կ. ՊՈԼԻՍ, 23 յուլիսի: Թիւրքաց ծովային զէպիական ստացաւ հրաման գնալ Կանէա:

Կ. ՊՈԼԻՍ, 23 յուլիսի: «Սաբան» հաղորդում է, որ թիւրքաց երկրորդ նաւատորմը գնաց Միջկլիսական ծովը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՋԱԼԱԼ-ՕՂԻՍԻ Ռուբէն Դաշտայեանց. Դաք ուղարկել էք 47 ըուրլի առանց նամակի. բարեհաճեցեք բացատրել, թէ ինչ նպատակի պիտի ծառայի այդ փողը: Եթէ գաղթականները համար է, ուղարկեցեք նուիրատուների ցուցակը:

ԿՐԱՄԵՎՈՎՕՊՈՒԹ, Թ. Գեօրգիեանց. Չեր յիշած անձի ձեռքով 56 ըուրլի 80 կողիչ չենք ստացել: Կրամնօլոպից վերջին անգամ ստացել ենք գաղթականների օգտին 196 ըուրլի, որ հաւաքել են Գրիգոր Գրիգորեան, Ն. Նաղարեան, Ս. Մէլիք-Շահնազարեանց և Թ. Գեօրգիեանց: Յուցալիք հրատարակված է «Մշակի» № 75-ի մէջ: Բարեհաճեցեք նայել այդ ցուցակին և բացատրել՝ արդեօք ձեռ յիշած 56 ըուրլի 80 կողիչ գումարը մանուս է հրատարակածի մէջ, թէ առանձին գումար է, սրը մենք չենք ստացել:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՔՍԱՆԻՐ ԲԱՍՆԵՐԱՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՆ՝ ԱՆԻՔԻԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է, որ իր առեանում, յուլիսի 29-ին, ցերեկվայ ժամի 12-ին, նշանակված է անուրջ սպանդանոցի ճանապարհին մի կամուրջ շինելու համար նաւթուղի սուրբ վարկարէի եկեղեցու մեա եղած ձորում, 3439 ըուրլի 90 կօպ. գնով: Անուրջին մասնակից կամեցողները կարող են տեսնել պայմանները Ուպրալայի այն բաժնում, որ շինութիւնների գործերն է վարում, ամեն առեանական օր, ցերեկվայ 9 մինչև 1 ժամը: (№ 85) 1-3

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ նրա առեանում, յուլիսի 21-ին, օրվայ ժամը 12-ին, նշանակված է անուրջ հայթայթելու համար 300 խոր. սաժէն խճաւաղ և 150 խոր. սաժէն խիճ, որ պէտք է գործածվի նաւթուղի և Մամուկիսիի դիւղի վրայով գէպի սպանդանոցը ճանապարհ շինելու, ինչպէս և 750 քառակ. սաժ. տարածութեամբ սպանդանոցում սարսպատակ շինելու համար: Անուրջին մասնակիցը ցանկացողները կարող են քննել պայմանները վարչութեան շինութիւնների բաժնում, ամեն օր, ժամը 9-ից մինչև 1-ը: (№ 84) 2-2

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C^{ie}

ՅԻՐԱՆԱԿԱՆ ՆԱԻՐԱՅՈՒՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵԻԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկալ Տրապիզոն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 23 յուլիսի (4 օգոստոսի) ԱՆԱՏՈՒՆ չորեքշաբթի, նաւապետ ԲԻՍՆԻՒՆ և այլուսն շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ձախց յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան ամսական արվում են սովորականից

Պապա պն և ըստ: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակաւորներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր Գ'Արնօն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Միօնի փող. նախկին Արժմուտ. քարվասարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Գլըբարեանին, Կոլմրեանիսկայա հրապարակ: ՆՕՎՕՐՈՍՍԻՅՍԿ—պ. Մեկիսիօր Հերշիսիօրքերին: (№ 76) 6-20

ՆԱԽԻՉԵԱՆԻ ԵՒ ԲԵՄԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՊՐՈՑՈՒՄ,

Հոգաբարձութեան վճուի համաձայն, առաջիկայ օգոստոսից պէտք է լինի ընդունելութիւն ձրիավարժ և թոչակաւոր դիշերթիի աշակերաններ: Չրիավարժների թիւը պէտք է լինի 15, որոնց թում պէտք է երկը լինեն վիճակիս քաղաքներից՝ սրբալան աւաղնորդի ընտրութեամբ և երկուը վիճակիս չրջակայ հայ դիւղերից, իսկ սաս հոգի պէտք է ընդունելին՝ համաձայն զորոցի բարերար Գեալիօի կտակին՝ Նախկին քաղաքի չքաւոր դասակարգի հայ ընտանիքներից: Թոչակաւորների համար տարեկան վարձ նշանակված է 300 ըուրլի՝ կէս օգոստոսին և միւս կէսն յունվարին: Գիշերթիիների համար պէտք է լինեն երկու առանձին դատարաններ՝ համալսարանական կրթութեամբ: Յանկացողները վաղօրօք պէտք է խնդրամատոյց լինեն յանուն հոգաբարձութեան՝ թոչակաւորների թիւի սահմանափակ լինելուն պատճառով (ընդամենը 25). պէտք է ներկայացուին ծննդեան և պատուաստի վկայականները:

Տեսուչ զարմանցի Գ. Չարբեան (№ 83) (աւր. 17, 19, 22, օգ. 2, 5, 7) 2-6